

**Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների
հայրենադարձության սոցիալ-մշակութային հետևանքները
(պարսկահայերի օրինակով)**

Սաթենիկ Մկրտչյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ Գիտությունների Ազգային
Ակադեմիա
satenikm@yahoo.com

Ռուզան Ծատուրյան
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
ruzantsaturyan@yahoo.com

Երկքաղաքացիություն. Տնտեսական և Սոցիալական հետևանքները
ՀՄՔՀԽ համագումար

Հունիսի 17-18, 2006թ.
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների հայրենադարձության սոցիալ-մշակութային հետևանքները (պարսկահայերի օրինակով)

Աբստրակտ

Սովետական Հայաստան Հայրենադարձության հիմնական ալիքներն են 1920, 1946-48, 1962-1973 թթ., որոնց ընթացքում ամենատարբեր գնահատականներում Սովետական Հայաստան են վերադարձել շուրջ 200 հազ. հայ: Ազգությամբ հայերի Հայաստան վերադարձի ևս մեկ ալիք դիտարկվեց, թեև փոփոխական ինտենսիվությամբ, ետխորհրդային շրջանում, ինչը թե՛ր բովանդակությամբ, թե՛ ուղեկցող հանգամանքներով, թե՛ իրականացման մեխանիզմներով, տարբեր է և հայրենադարձություն հասկացությունը պետք է դիտարկվի առկա իրավիճակում: Սույն հոդվածում քննարկվելու են հայրենադարձության (ինմիգրացիայի) վերջին ալիքի առանձնահատկությունները, որոշ քանակական տվյալներ երևույթի մասին, ինչպես նաև գործընթացի արդյունքում ստեղծված սոցիալ-մշակութային փոփոխությունների մասին, որոնք նկատվել են տեղափոխվածների մոտ: Հոդվածի համար հիմք են ծառայել ՀՀ համապատասխան պետական մարմինների կողմից տրամադրված տվյալները, տպագիր այլ նյութեր, և որակական, խորը հարցազրույցները:¹

Պատմական ակնարկ

Հայրենադարձությունը սահմանվում է որպես տարագիրների վերադարձը պատմական հայրենիք՝ նրանց քաղաքացիության վերականգնումով: Այս իմաստով Խորհրդային Հայաստան հայրենադարձության հիմնական ալիքներ են համարվում 1921-36թթ., 1946-49թթ., 1962-1982թթ, որոնց ընթացքում Խորհրդային Հայաստան են վերադարձել շուրջ 200 հազ. հայեր:

Կազմակերպման մակարդակով և ծավալներով առավել արդյունավետ էր հայրենադարձության երկրորդ՝ 1946-49թթ. փուլը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Խորհրդային Հայաստանի կառավարությունը հանդես եկավ սփյուռքահայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու որոշմամբ: Ստեղծվեց արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե, որի խնդիրն էր սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպումը արտասահմանում և նրանց ընդունումը ԽՍՀՄ տարածքում ստեղծված կայաններում: Կազմավորվեց նաև վերաբնակեցման վարչություն, որը պետք է զբաղվեր ներգաղթածների տեղաբաշխմամբ հանրապետությունում, նրանց բնակարանային և աշխատանքային հարցերի

¹ Խորը հարցազրույցները անց են կացվել հեղինակների կողմից փետրվար-մայիս, 2006 թ. ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան տեղափոխված 16 - 35 տարեկան ազգությամբ հայերի և նրանց ընտանիքների անդամների հետ, ընդ որում դիտարկվել են նրանք, ովքեր մշտական բնակության նպատակով են տեղափոխվել և առնվազն վերջին 5/3 տարվա ընթացքում արդեն բնակվում են Հայաստանում:

կարգավորմամբ, նոր ավանների ու բնակելի տների կառուցմամբ: Միայն 1946-48թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթեցին 20.219 ընտանիքներ կամ 89.475 հայեր, որի 23% -ը՝ միայն Իրանից: Հայրենադարձության հաջորդ՝ 1962-82թթ. փուլում Հայաստան վերադարձան 31.920 հայեր, որից 70 %-ը՝ միայն Իրանից²: Հատկապես Մերձավոր Արևելքի երկրներից ներգաղթողների մեծ մասը արհեստավորներ և գյուղացիներ էին, կրթական ցածր ցենզով:

Փաստորեն, ինչպես ցույց են տալիս թվական տվյալները, ամենամեծ թվով հայրենադարձություն կատարվել է Իրանից, ինչը պայմանավորված էր մի շարք համգամաքներով. Իրանում հայ բնակչության մեծ թվով և կենսապայմանների դժվարությամբ: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանում բնակվել է մոտ 110.000 հայ, 1950-ականներին՝ 115.000, 1979թ. հեղափոխության նախօրյակին՝ անցել է 200.000-ից: Սակայն իսլամական հեղափոխության և իրանա-իրաքյան պատերազմից հետո երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր վիճակի հետևանքով իրանահայությունը մեծ չափերով սկսում է արտագաղթել: 1970-ական թթ. վերջին արդեն իրանահայության 95%-ը քաղաքաբնակ էր, հիմնականում Թեհրան, Սպահան, Թավրիզ քաղաքների բնակիչներ³:

Չնայած որ հայրենադարձությունը կազմակերպված էր պետական մակարդակով, այնուամենայնիվ բացահայտվեցին մի շարք լուրջ խնդիրներ՝ կապված հայրենադարձների տեղավորման, տեղաբաշխման և աշխատանքով ապահովման հարցերի հետ: Հայրենադարձները՝ լինելով քաղաքաբնակ, հրաժարվում էին մեկնել գյուղական շրջաններ և փոխարենը ձգտում էին հաստատվել մեծ քաղաքներում, առավելապես Երևանում:

1946թ. հայրենադարձված իրանահայերը բնակեցվեցին Սիսիանում, Գորիսում, Ղափանում, 1963-80թթ.՝ Լենինականում, Կիրովականում, Սևանում, Հրազդանում, Չարենցավանում, Աբովյանում, Մասիսում, Արարատում, Արտաշատում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում: Սակայն համեմատաբար շոգ կլիմայով Իրանից տեղափոխվածների համար այս քաղաքներից շատերը կլիմայական տեսանկյունից շատ անհարմար էին և առաջացնում էին մեծ դժգոհություններ: Դժգոհությունների պատճառ էր դառնում նաև հարազատներին, ազգականներին և միևնույն բնակավայրից (քաղաք, գյուղ) տեղափոխվածներին միմյանցից հեռու բնակավայրերում տեղաբաշխելը, ինչը առավել դժվարացնում էր նոր միջավայրին հարմարվելու

² Հ.Ու. Մելիքսեթյան, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980թթ., Երևան 1985

³ Մելիքսեթյան, նույնը

հնարավորությունները: Սոցիալական և մշակութային նախկին և հայրենադարձվողների համար ընդունված կապերից հեռացումը լրացուցիչ բարդություն էր ձևավորում հայրենադարձվողների շրջանում և խոչընդոտում կենցաղա-մշակութային փոխներթափանցմանը: Խոչընդոտ էին հանդիսանում նաև լեզվական (հիմնականում` բարբառային), ենթաէթնիկ հոգեբանական, նաև մտածելակերպի և վարքագծի տարբերություններն ու անհամատեղելիությունը, ինչու չէ պայմանավորված Խորհրդային Չայաստանի քաղաքական և միակուսակցական համակարգի տարբերությամբ: Այս խնդիրներն էին, որ հետագա տարիներին նպաստեցին հայրենադարձության տեմպերի կրճատմանը, նվազմանը և ապա սկսվեց նաև հակառակ գործընթաց` հայրենադարձվածների արտագաղթ:

Արդի փուլ

Ազգությամբ հայերի Չայաստան վերադարձի ևս մեկ ալիք, թեև փոփոխական ինտենսիվությամբ, դիտարկվեց նաև հետխորհրդային շրջանում, որը թե՛ իր բովանդակությամբ, թե՛ ուղեկցող հանգամանքներով, թե՛ իրականացման մեխանիզմներով տարբեր էր նախորդ ալիքներից:

Անդրադառնալով «հայրենադարձություն» հասկացությանը, կարծում ենք, որ այսօրվա իմաստով դեպի Չայաստան տեղաշարժերը կարելի է բնորոշել առայժմ միայն որպես ազգությամբ հայերի դեպի Չայաստան միգրացիոն գործընթացների աշխուժացում և ակտիվացում, ինչը ճիշտ և նպատակային կազմակերպելու և ուղղորդելու դեպքում միտում ունի վերածվելու հայրենադարձության` իր ծավալային և առավել գիտակցված, բովանդակային ընդգրկումներով: Կարծում ենք, որ ճիշտ կլինի արդի փուլում հայրենադարձությունը սահմանելիս դիտարկել ոչ այնքան իրականացման իրավական մեխանիզմների տեսանկյունից, այլ որպես որոշիչ ցուցիչ համարել Չայաստանում ապրելու, բնակություն հաստատելու մտադրությունը:

Չայաստանի անկախ հանրապետության հռչակումը մեծ ոգևորություն առաջացրեց Սփյուռքում և մեծացավ Չայաստանը տեսնելու և երկրի կայացմանը նպաստելու ձգտումը:

Չնայած վիճակագրական մանրամասն տվյալների բացակայությանը` կարելի է նշել, որ նրանց մեջ գերակշռում էին Մերձավոր արևելքից, հատկապես Իրանից տեղափոխվածները: Այսպես, 1996-ից Չայաստանի Չանրապետությունում կացության ժամանակավոր և հատուկ կարգավիճակ

ստացել են Իրանի 5500 հիմնականում ազգությամբ հայ քաղաքացիներ. 1996-2000թթ.՝ 706, 2001թ.՝ 332, 2002թ՝ 493, 2003թ.՝ 959, 2004թ.՝ 935, 2005թ.՝ 758⁴: («Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքն ընդունվել է միայն 1994թ.-ին, այդ իսկ պատճառով հաշվառումն իրականացվել է միայն 1996թ.-ից):

Հայաստանում ապրելու մտադրությամբ Հայաստան տեղափոխված և Հայաստանում նվազագույնը 3-5 տարի բնակվող 16-35 տարեկան, սոցիալական տարբեր խմբերի պարսկահայերից(այսուհետև այդպես կնշենք Իրանի Իսլամական հանրապետությունում ապրող և/կամ Հայաստան տեղափոխված ազգությամբ հայերին, հնարավոր է նաև իրանահայ հասկացությունը) մեր գրառած նյութը ցույց է տալիս, որ Հայաստան գալու շարժառիթները ի վերջո կապված են «հայրենիք» հասկացության նորովի ընկալման հետ: Ընդունելով հանդերձ, որ հայերի պատմական հայրենիքի հասկացությունն ու սահմանները այլ են, ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը դիտարկվում է «հայրենիք», ինչ որ իմաստով մի տեսակ «Ավետյաց երկիր», որն ի վերջո պիտի հանդիսանա հայության վերջնական հանգրվան ու բնակավայր: Պարսկահայերի՝ Հայաստան տեղափոխվելու դրդապատճառների շատ սիմվոլիկ ու խտացված զգայական բնորոշում տվեց մի պարսկահայ կին, նշելով, թե *«դա նույնն է, որ քրիստոնյային հարցնեն, թե ինչու է գնում եկեղեցի»:*

Պարսկահայերի՝ Հայաստան տեղափոխվելու և Հայաստանում հաստատվելու հիմնավորվածությունը իր արտահայտումն է գտել նաև ժողովրդական բանահյուսության անեկդոտի ժանրում, երբ համարվում է, որ պարսկահայերը 400 տարի առաջ «խոպան»՝ արտագնա աշխատանքի մեկնած հայերն են, որ հիմա վերադառնում են: Խոսքը տվյալ դեպքում Շահ Աբասի կողմից Հայաստանից բռնագաղթեցված ու Պարսկաստանում բնակեցվածների մասին է, որոնց սերունդներն են նաև այսօրվա պարսկահայերը: Այսինքն, նրանց՝ Հայաստան վերադառնալը միանգամայն բնական և օրինաչափ է դիտարկվում:

Ներկայումս Իրանում բնակվում են շուրջ 80.000 հայեր⁵: Համայնքը խիստ շերտավորված է: Կան մեծ թվով արհեստավորներ, բանվորներ, մտավորականներ (ճարտարապետ, ճարտարագետ, բժիշկ, ուսուցիչ), ձեռնարկատերեր, առևտրականներ: Ներկայումս Իրանից հայերի մեծ հոսք է

⁴ ՀՀ նախագահի աշխատակազմի Ներման, քաղաքացիության, պարզևների, կոչումների վարչություն:
⁵ Հա սփյուռքի հանրագիտարան, Երևան, 2003թ.

սկսվել ԱՄՆ, նաև Հայաստան: Պատճառը Իրանի Իսլամական հանրապետության քաղաքական, սոցիալ-մշակութային իրավիճակն է, առավելապես կրոնական սահմանափակումները, որոնք հատկապես դժգոհություններ են առաջացնում երիտասարդության շրջանում: Հայաստան տեղափոխված իրանահայերի մեծ մասը՝ որպես Իրանից արտագաղթի կարևոր պատճառ նշում են հենց այս հանգամանքը և դրան հակառակ՝ Հայաստանում նման լեզվա-մշակութային, կրոնական դաշտի առկայությունը, երիտասարդների ինքնադրսևորման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների և նախադրյալների առկայությունը:

Թեև անկախ Պարսկաստանում հայերի հանդեպ առկա է հանդուրժողականություն, իսկ հայերն ունեն հասարակական բարձր դիրք, այնուամենայնիվ հայերն իրենց անապահով և օտարված են զգում: Ինչպես նշեց 9 տարեկանում Հայաստան տեղափոխված մի պարսկահայ ուսանողուհի, իրեն շատ զարմացրել և դուր էր եկել, որ *Հայաստանում ազատ էր, փողոցում կարող էիր երգելով քայլել, ինչը Պարսկաստանում հնարավոր չէր, քանի որ օտար ես ընկալվում, անմիջապես արտաքինից նկատվում է:*

Հայաստանի Հանրապետություն պարսկահայերի «ներգաղթի» հիմնական փուլերը և «ներգաղթի» հիմնական առանձնահատկությունները

Պարսկահայերի՝ Հայաստան տեղափոխման մի քանի փուլ կարելի է առանձնացնել.

- 1991թ.-ից անմիջապես հետո, երբ հիմնականում Հայաստան այցելում են ճանաչողական և տուրիստական նպատակներով, հիմնականում ընտանիքներով: Նրանցից առավել «համարձակները»՝ մի քանի ընտանիքներ, հիմնականում կապված պարսկահայերի շրջանում մեծ ազեցություն ունեցող Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության գործունեության հետ, արդեն ապրելու նպատակով հաստատվում են Հայաստանում, ձեռք բերում անշարժ գույք՝ վաճառելով Պարսկաստանում ունեցած բնակարանը, գույքը, հիմնում որևէ մասնավոր բիզնես: Այս շերտի առանձնահատկությունն այն էր, որ որպես կարևորագույն արժեք համարվում էր հայրենասիրությունը և անկախ առկա վիճակից ու դժվարություններից հայրենիքում ապրելու վերագտած հնարավորությունից օգտվելը:

- 1993/94թթ. կախված ՀՀ քաղաքական և դրանով պայմանավորված նաև սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից, սկսված «ներգաղթը» ժամանակավոր դադար է ապրում:

- 1995թ.-ից հետո տեղափոխվածների մեջ մեծ թիվ են կազմում ուսանողները, որոնք գալիս էին ՀՀ ԲՈՒՀ-երում ուսանելու: Նրանց աստիճանաբար հետևում է ընտանիքների տեղափոխումը:

- 2000թ.-ից Հայաստան տեղափոխման ծավալները աճ են ապրել, ինչպես նաև փոխվել է տեղափոխվողների տարիքային և սոցիալ-մասնագիտական կազմը: Այս փուլում որպես տեղափոխման խթան հանդիսացել է պետության կողմից Հայրենիք-Սփյուռք կապերի կարևորումը և այդ նպատակով կազմակերպված մի շարք զանգվածային միջոցառումներ, ինչպիսիք են օրինակ Համահայկական խաղերը և Հայրենիք-Սփյուռք համաժողովները, ինչպես նաև ըստ հարցվողների նվազ կարևոր դեր չի կատարել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի համենատարբար կայունացումը: Տեղափոխման համար նպաստավոր են դարձել արդեն ստեղծված սոցիալական կապերը և արդեն Հայաստանում բնակություն հաստատած պարսկահայերի օժանդակությունը:

Ի տարբերություն նախորդ շրջանի՝ հետխորհրդային շրջանի «հայրենադարձությունն» ուներ մի շարք առանձնահատկություններ. այն պլանավորված և կազմակերպված չէր, հիմնականում տարերային էր և աստիճանական զարգացում ապրող գործընթաց է հանդիսանում: Այժմ արդեն տեղափոխվողն ինքն էր ընտրում իր բնակավայրը, որը գերակշիռ մեծամասնության համար հանդիսանում էր մայրաքաղաք Երևանը և բնակարանը, որը հիմնականում ընտրվում էր քաղաքի կենտրոնական մասերում (հիմնականում Փոքր կենտրոնի և Բարեկամության մետրոյի ու Կոմիտասի փողոցի շրջակայքում): Առավել նեղ իմաստով առաջանում էին «պարսկահայերի» թաղամասեր և շենքեր՝ առավել կոմպակտ բնակեցմամբ և միմյանց հետ շփումների ինտենսիվությամբ (օրինակ, «Ամիրյան փողոցի պարսկահայերի շենք»):

Ի տարբերություն խորհրդային շրջանում Հայաստան տեղափոխվածների՝ հետանկախության փուլում Հայաստան են տեղափոխվում արդեն պարսկահայերի առավել կրթված, ֆինանսապես ապահով խավը:

Հետխորհրդային շրջանի «հայրենադարձության» հիմնական առանձնահատկությունը մեր կողմից դիտարկվում է հանգամանքը, որ այն առավելապես հանդիսանում է երիտասարդների հայրենադարձություն, քանի որ հիմնական շարժիչ ուժը և տարիքային խումբը հենց երիտասարդությունն է: Նրանց Հայաստանում հաստատվելու առաջին քայլերն արվում են ուսանելու

նպատակով: Մեծ թիվ են կազմում այն ընտանիքները, որոնց երեխաներից մեկն արդեն ուսանում է Հայաստանում, այդ իսկ պատճառով նրան հետևում են ընտանիքի մյուս դպրոցահասակ երեխաները, առավելապես արդեն ավագ դպրոցի աշակերտները: Ուսումնառության տարիներին էլ շատերը կապվում են միջավայրին, յուրացնում մշակույթը, կենցաղավարման նորմերը, ինտեգրվում հասարակություն և ի վերջո հաստատվում Հայաստանում:

Կրթության ոլորտ

Ավագ դպրոցականները ընդունվելով Հայաստանի միջնակարգ դպրոցներ՝ հանդիպում են մի շարք խոչընդոտների ու խնդիրների. նախ համառոտ փորձենք ներկայացնել Պարսկաստանում դպրոցական համակարգի առանձնահատկությունները. գերակշիռ մեծամասնությամբ ազգությամբ հայերը ընդունվում են հայկական դպրոցներ, որոնց սակայն Իրանի Իսլամական Հանրապետության օրենքներով ըստ սեռային պատկանելության հատկանիշի բաժանված են արական և օրիորդաց դպրոցների: Հայկական համարվող դպրոցներում շաբաթական ընդամենը երեք ժամ հատկացված է հայոց լեզվի և գրականության ուսուցմանը՝ մեսրոպյան ուղղագրությամբ, իսկ մնացած բոլոր առարկաները անցնում էին պարսկերենով: Ընդունվելով Հայաստանի հանրակրթական դպրոցներ՝ պարսկահայերի համար դժվարություն է առաջացնում առաջին հերթին հայերենի իմացության աստիճանը և ուղղագրության տարբերությունները (Հայաստանի դպրոցներում ուսուցանվող Խորհրդային շրջանում հաստատված ուղղագրության կանոններ): Ուսուցման գործընթացի խնդիրներից կարևորվում է նաև պարսկահայերի ռուսերենի չիմացությունը, որը դպրոցում այդպես էլ չհաղթահարվելով, տեղափոխվում է նաև ԲՈՒՀ: Հայաստանի դպրոցական համակարգում տարածված հայ և համաշխարհային գրականությանը մեծ տեղ հատկացնելը և հասակակիցների շրջանում այդ ոլորտի վերաբերյալ առավել մեծ ինֆորմացիայի առկայությունը առավել դժվարացնում է դեռահասների սոցիալիզացիայի գործընթացը, ինչը, սակայն, համապատասխան գիտակցության դեպքում, նաև հանդիսանում է դեռահասների զարգացման խթան: Դեռահաս աղջիկների համար սկզբնական շրջանում որոշակի բարդույթներ է առաջացնում նաև նույն դասարանում տղաների հետ համատեղ սովորելու փաստը: Չնայած այս խնդիրներին, վստահաբար կարելի է արձանագրել, որ դպրոցական փուլը Հայաստանում ավարտածները հետագայում առավել հեշտությամբ են ինտեգրվում

հասարակությանը և իրենց էլ համարում Հայաստանյան հասարակության լիիրավ անդամ:

Պարսկահայ երիտասարդների առավել ստվար խումբը հանդիսանում է ուսանողությունը: Ընդ որում Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող ուսանողների թիվը աճում է (2000թ. 103 ուսանողի համեմատությամբ 2004թ.-ին ուսանողների թիվն արդեն կազմում էր 246, իսկ արդեն 2005/2006 ուս. տարում ՀՀ բարձրագույն պետական և ոչ պետական ԲՈՒՀ-երում սովորող 2960 սփյուռքահայ ուսանողներից 455 պարսկահայեր են⁶), ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. Պարսկաստանում գնալով առավել դժվար է դառնում օտարազգիների համար ԲՈՒՀ ընդունվելը, իսկ ընդունվելու դեպքում էլ շատ են լինում դեպքեր, երբ դպրոցի ավարտական գնահատականներով ընդունվում են Թեհրանից հեռու գտնվող որևէ քաղաքի համալսարան, ինչը անհնար է դարձնում ուսումը շարունակելը, հատկապես հայ աղջիկների համար: Տղաների համար Թեհրանից դուրս գալը հնարավորություն է պարսկական բանակում չծառայելու համար, չնայած նշվում է, որ պարսկական օրենքով սահմանվում է վճարի չափ՝ բանակում ծառայել չցանկացողների համար: Հայաստանի ընտրությունը բացատրվում է նախ և առաջ «հայրենիքում» գտնվելու գաղափարով, լեզվական խոչընդոտի բացակայությամբ և, ի վերջո, արդեն նախորդ սերունդներից կամ ավելի շուտ Հայաստան տեղափոխվածներից ձևավորված սոցիալ-մշակութային կապերի առկայությամբ: Վերջին տարիներին ձևավորվել է նաև բիզնեսի հատուկ ձև, որն զբաղվում է Պարսկաստանից Հայաստան ուսանողներ բերելով և ընդունելության գործընթացի կազմակերպչական հարցերով, ինչը իրենց՝ պարսկահայերի բնորոշմամբ բավականին նպաստում է և խթանում է վերոնշյալ գործընթացը:

ԲՈՒՀ-ի և մասնագիտության ընտրությունը ևս պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Հետանկախության շրջանում ՀՀ ԲՈՒՀ-երից միայն ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ավարտական փաստաթուղթն էր ընդունվում Իրանի Իսլամական Հանրապետությունում, իսկ արդեն 2003թ.-ից ԵՊՀ, Պետ. բժշկական համալսարանի, ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, ՀՊՃՀ-ի, Երևանի պետ. կոնսերվատորիայի և Բոյուսովի անվան պետ. լեզվաբանական համալսարանի ավարտական փաստաթղթերը ևս

⁶ ՀՀ ԿԳՆ միջազգային կապերի և սփյուռքի հետ կապերի բաժին:

ընդունվում են Պարսկաստանում: Պարսկահայերի շրջանում արդեն ձևավորված մասնագիտական նախընտրությունները, նաև վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով 2005/2006 ուս. տարում իրանահայ ուսանողները ՀՀ ԲՈՒՀ-երում բաշխվել են հետևյալ կերպ. ԵՃՇՊՀ՝ 85 ուսանող, ԵՊՃՀ՝ 79, Գեղարվեստի պետ. համալսարան՝ 50, Երևանի պետ. բժշկական համալսարան՝ 62, ԵՊՀ՝ 45, Երևանի պետ. կոնսերվատորիա՝ 24, մնացած պետական ԲՈՒՀ-երում պարսկահայ ուսանողների թիվը չի գերազանցում մեկ տասնյակը: 80 պարսկահայ ուսանողներ էլ ուսանում են ՀՀ ոչ պետական ԲՈՒՀ-երում, իսկ ընդամենը 11-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում⁷: ՀՀ օրենքներով արտասահմանցիները ՀՀ պետական ԲՈՒՀ-եր ընդունվում են միայն վճարովի հիմունքներով, ընդ որում արտասահմանցիների համար սահմանվում է ՀՀ քաղաքացիների համար սահմանված վճարից ավելի բարձր վճար: Ուսումնական գործընթացի հետ կապված առավել լուրջ խոչընդոտ է հանդիսանում ռուսերենի չիմացության հարցը, որը դժվարություններ է ստեղծում հատկապես մասնագիտական գրականությունից օգտվելու հարցում:

Ուսումնառությունից հետո Հայաստանում ապրելու և աշխատելու որոշում ընդունած պարսկահայ երիտասարդների խումբն առավելապես համապատասխանում է «հայրենադարձված»-ի բնորոշմանը: Պետք է նշել, որ հասարակությանն ինտեգրման իմաստով այս շերտն առավել հաջողակ է և հանդուրժողականություն դրսևորող, ինչին նպաստում է նախ և առաջ ուսումնառության տարիներին հասարակության արժեքային համակարգին և կենցաղավարման մշակույթին ծանոթությունը:

Ջբաղվածության ոլորտ

Ջբաղվածության ոլորտների ընտրությունը ևս ենթարկվում է մի շարք օրինաչափությունների. ՀՀ պետական համակարգում աշխատելու հնարավորությունը բացառվում է՝ ՀՀ օրենքներով այդ իրավունքը վերապահելով միայն ՀՀ քաղաքացիներին, բացի այդ պետական համակարգում աշխատանքը համարվում է ոչ արժեքավոր, ցածր վարձատրվող: Պարսկահայերը հիմանականում Հայաստանում հիմնում են որևէ մասնավոր բիզնես՝ հաջողությամբ հաստատվելով առավելապես սպասարկման, առևտրի, իսկ վերջին շրջանում արդեն նաև շինարարության ոլորտներում, կամ էլ

⁷ ՀՀ ԿԳՆ միջազգային կապերի և սփյուռքի հետ կապերի բաժին:

աշխատանքի են ընդունվում մասնավոր ընկերություններում՝ միջազգային, կամ սփյուռքահայերի (պարսկահայերի) ֆինանսական կապիտալով հիմնադրված:

Ժամանց

Երիտասարդական մշակույթի բաղկացուցիչ ժամանցի ոլորտը Պարսկաստանում ձևավորված լինելով հիմնականում հայ համայնքային և կուսակցական կյանքի ազդեցությամբ, բավականին փոփոխություններ է կրում Հայաստանյան միջավայրում: Պարսկաստանում հայ համայնքում երիտասարդների ժամանցի կազմակերպմամբ հիմնականում զբաղվում են մի շարք միություններ, որոնցից առավել ճանաչվածը Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունն է՝ իր մարզական, մշակութային, հայրենասիրական-դաստիարակչական, ժամանցային բնույթի միջոցառումներով: Համայնքային շրջանակներում ժամանցի կազմակերպման ավանդույթը տեղափոխվում է նաև Հայաստան՝ նոր մշակութային միջավայր, երբ պարսկահայերը նախընտրում են հաճախել որոշակի մշակութային/ժամանցային վայրեր, որոնք ընդունված են են միայն իրենց, կամ այլ սփյուռքահայ շրջանակների կողմից: Կինոն, թատրոնը, օպերան, դասական երաժշտության համերգները՝ որպես նոր ժամանցային միջոցառումներ, դանդաղորեն ընդգրկվում են պարսկահայ երիտասարդների մշակույթում:

Հասարակական-քաղաքացիական ակտիվություն

Այս ամենին հակառակ պարսկահայերի հասարակական-քաղաքացիական կյանքը հենց իրենց՝ պարսկահայերի ընկալմամբ Հայաստանում առավել անբովանդակ է դառնում, քանի որ Պարսկաստանում հիմնականում նրանք մասնակցում էին համայնքային նշանակության միջոցառումներին, որոնց գերակշիռ մասն ուներ հայրենասիրական կամ կուսակցական ուղղվածություն: Հայաստանում հիմնականում չանդամակցելով որևէ կուսակցության, առավել ծանոթ և տեղյակ լինելով ՀՀԴ երիտասարդական թևի գործունեությանը՝ մասնակցում են նրանց կազմակերպած միջոցառումներին (ապրիլի 23/24 ջահերով երթ և այլն): Նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից վերջին տարիների առաջարկ է եղել ՀՀ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդներին, որպեսզի դրանց կազմում ընդգրկվեն նաև երկու սփյուռքահայ ուսանողներ, այդպիսով փորձելով ակտիվացնել

նրանց մասնակցությունը ԲՈՒՀ-ի կյանքին: 2004թ.-ից այս ներկայացուցիչները ստեղծում են «Սփյուռքահայ ուսանողների միջբուհական խորհուրդ» հասարակական կազմակերպությունը, որն այսօր ունի ինը պարսկահայ անդամ⁸: Հետաքրքիր է այն փաստը, որ այս գաղափարը չի ողջունվում 5-7 տարի առաջ Հայաստան տեղափոխված պարսկահայ երիտասարդների կողմից՝ համարելով, որ այդ կառույցն ընդամենը նպաստում է սփյուռքահայերի մեկուսացմանը:

Քաղաքացիական ակտիվության իմաստով խոչընդոտ է դիտարկվում ընտրությունների մասնակցելու իրավունք չունենալը, զոնե տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մակարդակով: Համարվում է, որ եթե արդեն 10 տարի է ապրելով մի երկրում, պիտի նվազագույնը իրավունք ունենաս մասնակցելու համայնքային նշանակության խնդիրների լուծմանը: Այս առումով պետք է նշել, որ նոյեմբերի 27, 2005թ. ընդունված Սահմանադրական փոփոխություններն ընդգրկում են դրույթ, ըստ որի օրենքով կարող է ահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց ՏԻՄ ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Քաղաքացիության իմաստով պետք է նշել, որ անգամ Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցող պարսկահայերը հիմնականում չեն դիմում ՀՀ քաղաքացիություն ստանալու համար՝ շարունակելով մնալ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ և Հայաստանում ապրելով կացության հատուկ՝ տաս տարվա կարգավիճակով, իսկ ուսանողները՝ կացության ժամանակավոր՝ մինչև մեկ տարի ժամկետով տրվող կարգավիճակով: Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիությունից չհրաժարվելը ունի մի շարք պատճառներ, որոնցից առավել որոշիչը Հայաստան տեղափոխված պարսկահայերի՝ բարեկամներին, հարազատներին հաճախակի այցելելու անհրաժեշտությունն է և դրանով պայմանավորված այցելության թույլություն ստանալու հարցում (վիզայի) խնդիր չունենալու հանգամանքը: ՀՀ քաղաքացի չլինելը Հայաստանում ապրելու և կենսագործունեություն ծավալելու իմաստով լուրջ խոչընդոտներ չի առաջացնում: Մինչդեռ պարսկահայերը մեծ ոգևորությամբ են ընդունել 2005թ.-ի նոյեմբերի 27-ի Սահմանադրական փոփոխություններով սահմանված երկաքաղաքացիության դրույթը՝ նշելով, որ անհամբեր սպասում են դրա կարգի մշակմանը և կիրառմանը: Հետևաբար, ՀՀ քաղաքացի լինելու դրույթը

8 Սփյուռքահայ ուսանողների միջբուհական խորհուրդ ՀԿ

ազգությամբ հայերի համար համարվում է բավականին էտալոնային և ցանկալի կարգավիճակ, նույնքան կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական կյանքին մասնակցության հնարավորությունը:

Ընտանեկան կենցաղ

Հայաստան տեղափոխվելով, բացի նոր միջավայրն ու տեղական արժեքներն ընդունելը, պարսկահայ երիտասարդներն իրենց հետ բերում են նաև իրենց համար ընդունված մշակութային և սոցիալական տարրեր, վարքի և արժեքային մոդելներ, նորմեր, որոնք անգամ Հայաստանում ապրելու պարագայում քիչ են ենթարկվում փոփոխությունների: Խոսքը ընտանեկան կենցաղի, փոխհարաբերությունների մշակույթի մասին է: Առհասարակ, ընտանեկան կենցաղը՝ որպես սոցիո-նորմատիվ մշակույթի առավել կայուն տարր, դժվարությամբ է ենթարկվում փոփոխությունների՝ շարունակելով պահպանել իր ավանդույթայնությունը: Հատկապես որևէ նոր մշակութային միջավայրում այն առավելապես իր վրա է կրում ինքնության պահպանման և դրսևորման գործառույթը: Պարսկահայ երիտասարդների պարագայում ևս գործում է այս հանգամանքը, երբ «տեղական-Հայաստանյան» միջավայրում հասարակական և սոցիալական շփումներում և փոխհարաբերություններում առաջացող խնդիրներին հակադրվում է ենթաէթնիկ ինքնության դրսևորման մի ուրույն մոդել՝ հանձինս ընտանեկան կենցաղավարման մշակույթի. շարունակում են կիրառել իրենց համար ընդունելի տոնացույցը և տոնածիսական մոդելը, գերակշիռ մեծամասնության դեպքում պահպանվում է պարսկական միջավայրում ձևավորված խոհանոցը՝ պարսկական և ավանդական հայկական կերակրացանկով, և ամենակարևորը՝ ընտանեկան փոխհարաբերությունների ու առհասարակ, ընտանեկան կենցաղի իրենց համար ընդունելի մոդելի գերազնահատումն է տեղական միջավայրում ձևավորված և կիրառվող մոդելների նկատմամբ, և այդ մշակույթում տեղական հնարավոր ազդեցությունների անընդունելիությունը: Օրինակ, կարելի է նշել, որ ամուսինների միջև և ծնող-երեխա հարաբերություններում պարսկահայ ընտանիքներում առավել կարևորվում է դերային հավասարության սկզբունքը, որը ըստ իրենց բնորոշման, հակադրվում է հայաստանյան ընտանիքներում ընդունված տղամարդու դերի գերակայության մոդելին:

Մեր կողմից գրառված նյութը ցույց է տալիս, որ ընտանիք կազմելիս պարսկահայ երիտասարդները առավելապես առաջնորդվում են

համերկրացուն՝ որպես կին կամ ամուսին ընտրելու սկզբունքով: Այս սկզբունքը կարևորվում էր նաև պարսկական միջավայրում, երբ հասարակական արգելք է գործում պարսիկների հետ ամուսնության պարագայում: Երևույթի անընդունելիությունը դրսևորվում է անգամ երևույթին տված բնորոշումներում, երբ պարսիկի հետ ամուսնացող հայը համարվում էր «թրքացած»:

Պարսկահայի հետ չամուսնանալու դեպքում «տեղացուն» որպես կին առավել հաճախ ընտրում են տղաները, մինչդեռ պարսկահայ աղջիկների համար հիմնականում «տեղացի ամուսինը» համարվում է անընդունելի և անցանկալի տարբերակ:

Արժեքներ, դիրքորոշումներ, մտադրություններ, հնարավորություններ

Հայաստան տեղափոխված պարսկահայ երիտասարդների խումբը՝ հանդիսանալով ինչ որ իմաստով ենթաէթնիկ հանրույթ, իր ներսում ևս ունի սոցիալական տարբեր խմբեր՝ ուրույն արժեքային համակարգով: Առավել որոշակի առանձնանում են մինչև 2000թ.-ը և դրանից հետո Հայաստան տեղափոխված խմբերը: Առաջին դեպքում Հայաստան գալը համարելով որպես առավել գիտակցված և արժեքային հստակ կողմնորոշում ունեցող քայլ, երիտասարդները ավելի հեշտությամբ են ինտեգրվում տեղական հասարակությանը, նաև ինչ որ իմաստով Հայաստանի համար սոցիալ-տնտեսական ծանր պայմանների ժամանակաշրջանում ապրելով Հայաստանում և տեղի հասարակության հետ «կիսելով» այդ դժվարությունները, իրենց ավելի շատ են նույնացնում այդ նույն հասարակության հետ, ավելի քիչ են շփվում պարսկահայերի հետ, ունեն ավելի շատ «տեղացի» ընկերներ: 2000թ.-ից հետո Հայաստան տեղափոխված պարսկահայերի մոտ առավել հաճախ է հանդիպում տեղական հասարակության արժեքների և մոդելների նկատմամբ ավելի դիմադրողական, քննադատության, արժեքային անհամատեղելիության մոտեցումներ: Հաշվի առնելով այդ շրջանում Հայաստանում իրենց համերկրացի հասակակիցների բազմաքանակությունը, նրանք ձևավորում են ինքնաբավ, միայն պարսկահայերից կազմված խմբեր, այլևս կարիք չզգալով «տեղացիների» հետ շփումների և համագործակցության, անգամ չընդունելով դրա անհրաժեշտությունը: Այս վիճակը ստեղծում է նաև հակառակ ազդեցություն, երբ «տեղական» երիտասարդությունն էլ սկսում է չընդունել այդ խմբերին՝ կարծես առանձնացնելով հասարակությունից: Հասարակական երկխոսության բացակայությունը ավելի է խորացնում ստեղծված անջրպետը և

նոր սոցիալ-մշակութային, ենթաէթնիկ խմբերի՝ հասարակությանը ինտեգրվելու հնարավորությունը: Այստեղ դեր են կատարում նաև տարբեր քաղաքական, պետական համակարգերի ազդեցությամբ ձևավորված արժեքային համակարգերը, նորմերը, վարքագծի կանոնները, աշխարհայացքը: Ձևավորվելով հիմնականում այլ կրոնական և էթնիկ միջավայրում և այդ պայմաններում առավել կարևորելով սեփական ազգային ինքնության պահպանման, փոխանցման խնդիրները, պարսկահայերը, նաև ինչու չէ սփյուռքահայերը առհասարակ, իրենց աշխարհայացքում ունենում են մի շարք էտալոնային, սկզբունքային արժեքներ՝ կապված «հայրենիք», «հայկականություն», «հայրենասիրություն» գաղափարների հետ: Հայաստանյան միջավայրում գերկարևորված չտեսնելով այդ արժեքներ, ապրում են մի տեսակ հիասթափություն, և դրա հետևանքով ձևավորվում է նաև հասարակության գործող արժեքային համակարգի անընդունելիություն: Իր դերն է կատարում նաև «խորհրդային» մշակույթի, արժեքների, մենթալիտետի, վարքագծի կանոնների չիմացությունը:

Այս ամենով հանդեժ պարսկահայերի դեպքում՝ համեմատած սփյուռքի այլ հատվածների, առավել լայն հնարավորություններ կան հասարակական ինտեգրմանը խոչընդոտող գործոնների հաղթահարման պարագայում: Դա առաջին հերթին լեզվական հարթությունն է. պարսկահայերի բարբառը հանդիսանալով արևելահայերենի ճյուղ, հիմնականում հասկանալի է տեղացիների համար, իսկ տեղի խոսակցական լեզուն՝ պարսկահայերի համար: Երկրորդը մշակութային մոտ դաշտերում գտնվելու հանգամանքն է. քանի որ Պարսկաստանը Հայաստանին անմիջական սահմանակից երկիր է՝ հայերը ավելի մեծ հնարավորություններ են ունեցել հաճախակի Հայաստան այցելելու, Հայաստանի մասին տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև պակաս դեր չի խաղացել պարսկահայերի զանգվածային հայրենադարձության փորձը, որի արդյունքում Հայաստանում ձևավորվել են բարեկամական, ազգակցական կապեր, շփումներ:

Օգտագործելով այս բոլոր առավելությունները՝ հասարակական երկխոսություն ծավալելու միջոցով հնարավոր կլինի առավել անցնցում հաղթահարել նույն էթնիկ հանրության տարբեր խմբերի պատմական հայրենիքի տարածքում համատեղ կենսագործունեություն ծավալելու գործընթացը: Այս ամենը իր հերթին հնարավոր կդարձնի առավել մեծ թվով

երիտասարդների՝ հայաստանում ապրելու, աշխատելու, ընտանիք կազմելու և
ապագա կառուցելու մտադրությունների և ցանկությունների իրականացումը: